ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

06.08.2020թ
Ե/279-2020

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 20.01.2020թ թիվ 01/107.3/00404-2020 գրությանը ներկայացնում ենք ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու 2020թ օգոստոսի 13-ին կայանալիք նիստի վերաբերյալ տեղեկացումը, ավագանու կայանալիք նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցերի վերաբերյալ ընդունվելիք որոշումների նախագծերը՝ ըստ կից հավելվածների:

Առդիր՝ 7 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ
Սարահարթ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Սարահարթ	Ավագանու հերթական նիստ	13.08.2020թ	12:00	**Սարահարթի** համայնքապետարանի նիստերի դահլիճ (Սարահարթ համայնք 10փ 1նրբ. 1շ)

ՕՐԱԿԱՐԳ

1. Սարահարթի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող եվ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
2. Լոռու մարզի Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020Թ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2020թ օգոստոսի 13-ի արտահերթ նիստի օրակարգը:

1. Սարահարթի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող եվ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

/

2. Լոռու մարզի Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ,ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով և <<Նորմատիվ իրավականն ակտերի մասին>> օրենքի 23-րդ, 33-րդ և 37-րդ հոդվածներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Սարահարթի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող եվ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը /համաձայն հավելվածի/:
2. Սարահարթ համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:
3. Ուժը կորցրած ճանաչել Սարահարթ համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 09-ի թիվ 49 որոշման թիվ 1 հավելվածը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սարահարթի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Հավելված
Սարահարթ համայնքի ավագանու
13.08.2020թ. N 29 որոշման

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6 (վեց)

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորների քանակը թիվը	Պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական
Քաղաքական և հայեցողական պաշտոններ			
Համայնքի ղեկավար	1	260000	260000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	135000	135000
Ընդամենը	2	395000	395000
Համայնքային ծառայության պաշտոններ			
Աշխատակազմի քարտուղար	1	140 000	140000
Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	125000	125000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	120000	120000
Ընդամենը	3	385 000	385 000
Տեխսպասարկման անձնակազմ			
Հավաքարար	0.5	120 000	60000
Ընդամենը	0.5	120000	60000
Ընդամենը	5.5	900 000	840 000

ՆԱԽԱԳԻԾ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ա. Փիլոյան/

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 09-ի <<ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 52-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարահարթ համայնքի ավագանու
«13» օգոստոսի 2020 թվականի N 30 որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Հովհաննիսյան Գոհար –քսան հազար դրամ, սոց. օգնություն
2. Հովսեփյան Գևորգ – քսանհինգ հազար դրամ, երեխայի ծննդյան գումար
3. Բաղրամյան Վարդան- երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
4. Գևորգյան Վաղինակ- տասնհինգ հազար դրամ, ինքնամեկուսացված ընտանիքի սոց. օգնություն